

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Թավադյան Է.Ա.*

Ամփոփում: Տնտեսական աճի տեմպի մեծացումը հարկերի դրույքաչափերի նվազման միջոցով իրական է այն դեպքում, եթե հարկերի դրույքաչափերն էապես մեծ են, քան տվյալ երկրին մեկ շնչին ընկնող եկամտի ցուցանիշով համապատասխանող այլ երկրներում, որոնց հետ երկրի առևտրաշրջանառությունը զգալի է: Եթե հարկերի դրույքաչափերը տվյալ երկրում արդեն համեմատաբար ցածր են, ապա այդ դեպքում հարկերի նվազեցումն ավելի ցածր մակարդակի, քան հարկավանների կամ նույն միության մեջ գտնվող երկրների մոտ տնտեսական աճի վրա դրական էֆեկտ չի ունենա: Հարկերի նվազեցման պայմաններում ծախսերի արդյունավետության գնահատումը խիստ նպատակահարմար է: Կրճատումները չպետք է վերաբերվեն պետության կողմից իրականացվող ներդրումներին, որոնց արդյունավետության ակնհայտ է, իսկ արդյունավետության գնահատականները հստակ: Ըստ էությանի վերլուծության՝ հարկերի դրույքաչափերը Հայաստանի համար ավելի բարձր են, քան օպտիմալը, ինչը բացասաբար է անդրադառնում տնտեսական աճի վրա: Հաշվի առնելով այն, որ հարկային ծանրաբեռնվածությունը Հայաստանում համեմատաբար ցածր է հարկային բարեփոխումների տվյալ փուլում, մինչև այդ ցուցանիշի որոշակի աճը նպատակահարմար է կիրառել հարկերի նվազման ընտրանքային սկզբունքը, հատկապես ուղղակի հարկերի մասով:

Բանալի բառեր. հարկային համակարգ, մակրոտնտեսական ցուցանիշներ, հարկերի դրույքաչափեր, օպտիմալ դրույքաչափ, տնտեսական աճ

JEL Classification F38, H21, H71, K34

1. Ներածություն

Տնտեսական քաղաքականության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է գնահատել հարկային համակարգի և մակրոտնտեսական ցուցանիշների փոխկապակցվածությունը:

* Էմմա Աշոտի Թավադյան – ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի ասպիրանտ,
e-mail: emmatavadyan@gmail.com

Հատկապես մեր կարգի երկրներում, որտեղ պետությունը փաստացի ձգտում է առավելագույն ֆիսկալ արդյունքի, պետք է ակտիվ կիրառել հարկերի կարգավորիչ և խթանիչ գործառնությունները: Առաջնային խնդիր է բարձրացնել տնտեսական գրավչությունը այն ոլորտներում, որոնք առաջին հերթին ապահովում են տնտեսական աճը, պատրաստի արտադրանքի արտահանումը, զբաղվածությունը և, իհարկե, անվտանգությունը, այդ թվում՝ տնտեսական անվտանգությունը: Դրանով իսկ իրականացվում է նաև հարկերի խթանիչ գործառնությամբ՝ ուղղված տնտեսական աճի տեմպերի մեծացմանը: Կարգավորիչ և խթանիչ գործառնությունների արդյունավետ կիրառումն իր հերթին նպաստում է ֆիսկալ գործառնության հնարավորությունների մեծացմանը:

Հարկերի նվազագույն դրույքաչափերի ուղեցույցը պետության հիմնական խնդիրների կատարումն է՝ անվտանգության ապահովում, պետական ապարատի գործունեության արդյունավետ իրականացում, առողջապահության, կրթության, գիտության ծախսերի պատշաճ մակարդակի ապահովում: Հարկերի վերին սահմանը չպետք է խոչընդոտի տնտեսության զարգացումը՝ տնտեսական աճի տեմպի մեծացում, ՀՆԱ-ի կառուցվածքի և առևտրային հաշվեկշռի բարելավում, զբաղվածության աճ: Եթե հարկերի նվազագույն մեծությունը գերազանցում է նշված վերին սահմանափակումը, ապա ելնելով հարկերի խթանիչ գործառնության կատարման անհրաժեշտությունից՝ խնդիր է առաջանում կրճատել նույնիսկ այդ նվազագույն ծախսերը: Իհարկե դա չի վերաբերում անվտանգության ապահովման ծախսերին:

Ֆիսկալ և կարգավորիչ գործառնությունն ուղեցույց են հարկման ներքին մակարդակը գնահատելու համար, քանզի դրանով լուծվում են պետության գործունեությունն ապահովող անհրաժեշտ խնդիրները: Խթանիչ գործառնություն ուղեցույց է հարկման վերին սահմանի համար, որը չի կարելի գերազանցել, քանզի դա կարող է խոչընդոտել տնտեսության զարգացումը:

2. Վերլուծություն

Հարկային բարեփոխումները պետք է նպաստավոր լինեն տնտեսական զարգացման առանցքային նպատակային ցուցանիշների համար և իհարկե չհակասեն սոցիալական արդարության սկզբունքին: Դրա հետ մեկտեղ որոշակի դժվարություն է ներկայացնում հարկային բարեփոխումների ազդեցության գնահատումը ամբողջ մակրոտնտեսական ցուցանիշների համակարգի վրա:

2019 թվականի հունվարի 1-ից Ռուսաստանն ավելացրել է ԱԱՀ-ի դրույքաչափը 18%-ից 20%, դրանով իսկ նպաստելով ֆիսկալ գործառույթին, հատկապես հաշվի առնելով Ռուսաստանի ներքին շուկայի մեծ ծավալը: Որոշ չափով դա բացասաբար կանդրադառնա ՀՆԱ-ի և սպառման վրա: Սակայն, հաշվի առնելով արտահանման գործոնը, որտեղ մեծ դեր ունի էներգակիրների արտահանումը, էներգակիրների գների բարձր լինելու պարագայում դա բացասաբար չի անդրադառնա արտահանման և զբաղվածության վրա: Նշենք, որ այդ քայլով նաև Ռուսաստանի ԱԱՀ-ի դրույքաչափը հավասարեցվել է ԵԱՏՄ անդամ Հայաստանի և Բելառուսի ԱԱՀ-ի դրույքաչափի հետ: Չնայած ճնշումը, գների աճի տեսանկյունից, դրանով իսկ մեծանում է: Սակայն Ռուսաստանը գնաց այդ քայլին այն ժամանակ, երբ տարեկան գնաճը զգալի նվազել է և չի գերազանցում 5%-ը: Այս քայլով Ռուսաստանը, նպաստելով հարկերի ֆիսկալ գործառույթին, խթանիչ գործառույթի տեսանկյունից բացասական զգալի ազդեցություն չի ունեցել: Չնայած արտահանումը 2020 թվականին նվազել է, որը նաև համաճարակի հետևանք է, սակայն զբաղվածության էական նվազեցում տեղի չի ունեցել:

Այս առումով, ըստ աղյուսակում նշված ֆիսկալ գործառույթի, հարկային բարեփոխումների վերը նշված նպատակներին հասնելու համար գործում է հետևյալ սահմանափակումը.

$$\text{կանխատեսվող} \frac{\text{հարկեր}}{\text{ՀՆԱ}} \geq \text{իրական} \frac{\text{հարկեր}}{\text{ՀՆԱ}}:$$

Այսինքն՝ խթանիչ և սոցիալական գործառույթներն առավելագույնս իրականացնելիս չպետք է վնասվի ֆիսկալ գործառույթը հատկապես ՀՀ-ում, որտեղ հարկեր-ՀՆԱ հարաբերակցությունը չի գերազանցում 22%-ը:

Հայաստանում, Վրաստանում, ԵԱՏՄ երկրներում և Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում այդ հարաբերակցությունը ցուցադրվում է աղյուսակ 1-ում:

Ինչպես տեսնում եք, Հայաստանն այս ցուցանիշով զիջում է Արևմտյան Եվրոպայի բոլոր պետություններին, ինչպես նաև ԵԱՏՄ գործընկերներին և հարևան Վրաստանին: Այդ իսկ պատճառով վերը նշված ֆիսկալ բնույթի սահմանափակումն ունի կարևորագույն նշանակություն Հայաստանի համար:

Աղյուսակ 1. Հարկեր-ՀՆԱ հարաբերակցությունը մի շարք երկրներում

Պետություն	2014	2015	2016	2017	2018
Հունգարիա	46.9%	48.2%	45.1%	44.7%	44.2%
Չեխիա	40.3%	41.1%	40.2%	40.5%	41.5%
Լեհաստան	38.7%	39.0%	38.9%	39.7%	41.2%
Սլովակիա	39.3%	42.5%	39.2%	39.4%	39.9%
Բելառուս	38.9%	38.8%	39.0%	38.7%	39.9%
Էստոնիա	38.3%	39.5%	39.1%	38.6%	38.5%
Լատվիա	36.1%	36.2%	36.2%	35.6%	36.9%
Ռուսաստան	33.9%	31.9%	32.8%	33.3%	35.5%
Բուլղարիա	33.6%	34.9%	34.7%	33.4%	35.1%
Լիտվա	33.4%	34.1%	33.6%	32.8%	33.9%
Ղրղզստան	35.6%	35.6%	33.5%	33.7%	32.8%
Ռումինիա	32.1%	32.8%	28.9%	28.0%	29.4%
Վրաստան	28.0%	28.1%	28.3%	29.2%	28.6%
Ղազախստան	23.7%	16.6%	17.0%	20.3%	22.2%
Հայաստան	22.0%	21.5%	21.4%	21.2%	21.6%

Աղբյուր՝ IMF տվյալներ:

Հարկերի դրույքաչափերի բարձրացումը նպաստում է ֆիսկալ գործառնության կատարմանը: Սակայն այստեղ առկա է դրանց օպտիմալ չափի մեծությունը: Դրանց աճը, որը բերում է պետական բյուջեի եկամուտների մեծացման, ծախսերի միջոցով կարող է ստեղծել շուկաների համապատասխան կառուցվածք, որոշ տեսակի, հատկապես ռազմավարական բնույթի արտադրություն: Այստեղ կարևոր է ծախսերի կառուցվածքը, որով այս պարագայում փաստացի ծախսերի իրականացման միջոցով ֆիսկալ գործառնության դերի բարձրացումը դրական է անդրադառնում տնտեսական աճի վրա: Դրա հետ մեկտեղ այստեղ առկա է հագեցվածության խնդիր, եթե ծախսերի միջոցով չեն կատարվում արդյունավետ ծրագրեր, ապա այդ ծախսերի մեծացումը բերելու է ՀՆԱ-ի և տնտեսական աճի տեմպի նվազման: Այստեղ տեղի է ունենում Գորտինիի կորի էֆեկտը [Какulina, 2014]:

Հարկերի դրույքաչափերի աճը որոշակի «օպտիմալ» կետից հետո չմեծացնելով ՀՆԱ-ն, դրանց հաշվին ոչ արդյունավետ ներդրումներ կատարելու պարագայում կարող է դառնալ բարձր գնաճի պատճառ-

ներից մեկը, որն ակնհայտ բացասաբար է անդրադառնում տնտեսական աճի վրա: Հատկապես ուղղակի հարկերի մեծացումը բացասաբար է անդրադառնում հարկերի խթանիչ գործառնության վրա և կարող է նպաստել տնտեսության ստվերի մեծացմանը և ունենալ հակառակ արդյունքը՝ բացասաբար անդրադառնալով պետական բյուջեի վրա: Անուղղակի հարկերի, մասնավորապես ԱԱՀ-ի մեծացումը նույնպես ունի իր սահմանափակումը, չունենալով արտահանման վրա զգալի ազդեցություն, գնաճի աճի վրա կարող է ունենալ նույնիսկ առավել ուժգին դեր և բերել բնակչության կենսամակարդակի նվազեցման: Այսինքն՝ ունենալ լուրջ բացասական սոցիալական հետևանքներ:

Հարկերի դրույքաչափերի նվազեցումը, ըստ նեոդասական մոդելների (Ռ. Սոլոու մոդել [Solow, 1956]), կարող է տալ հիմնականում կարճաժամկետ դրական արդյունք: Այն դեպքում, երբ հարկերի դրույքաչափերի նվազեցումը, բացասաբար անդրադառնալով ֆիսկալ գործառնության վրա, կարող է նաև չնպաստել կազմակերպությունների սարքավորումների արդիականացմանը: Էնդոգեն աճի մոդելում կապը հարկային ծանրաբեռնվածության և տնտեսական աճի միջև կախված է պետական ծախսերի արդյունավետությունից, հատկապես ներդրումային քաղաքականության առումով:

Պետք է նշել, որ տեսական հետազոտություններում ներկայացված չեն հստակ գնահատականներ այս կամ այն հարկի դրույքաչափի օպտիմալ մակարդակի մասով: Այդ իսկ պատճառով տվյալ կարգի գնահատականներն արվում են որպես կանոն մոտավոր, էմպիրիկ տվյալների հիման վրա:

Առկա են գնահատականներ, որոնք ստացվել են իմիտացիոն մոդելավորման միջոցով, որ բոլոր հարկերի նվազեցումը 10% բերում է 0,25% տնտեսության աճի տեմպի [Mendoza, 1996]: Էնդենն ու Սքիները Էկոնոմետրիկ վերլուծության միջոցով 10% հարկային ծանրաբեռնվածության կրճատումը գնահատել են, որ կբերի 0.72% տարեկան լրացուցիչ տնտեսական աճ [Engen, 1992]: Մք. Քալումը և Բլայսը նշում են, որ պետական բյուջեի ծախսերի կրճատումը 10% և համապատասխան հարկերի նվազեցումը կարող են բերել 0,7-0,9% լրացուցիչ տարեկան աճ [McCallum, 1998]: Սակայն այս փոխկապվածությունը տարբեր երկրների համար ունի իր յուրահատկությունը: Եթե հարկերի դրույքաչափերն այնքան բարձր են, որ խոչընդոտում են տնտեսական զարգացումը, այսինքն՝ հարկային համակարգի խթանիչ գործառնություն արդյունավետ չի գործում, այդ դեպքում հարկերի դրույքաչափերի նվազումը

դրական է անդրադառնում տնտեսության զարգացման վրա: Մակայն դրանց նվազեցումն այն աստիճանի, որ լիարժեք չեն իրականացվում պետության գործառնությունները, որոնք նպաստում են տնտեսության զարգացմանը, ապա այդ կարգի նվազեցումները, խաթարելով նաև հարկերի ֆիսկալ գործառնությունը, չեն նպաստի տնտեսության զարգացմանը: Հարկերի դրույքաչափերը մի կողմից սահմանափակվում են նրանով, որ չպիտի գերազանցեն մեծություն, որը խոչընդոտում է տնտեսության զարգացումը, մյուս կողմից՝ չեն կարող լինել նվազ, քան անհրաժեշտ է պետության առանցքային խնդիրները լուծելու համար:

Հարկերի դրույքաչափերի օպտիմալ չափը մոտավոր գնահատելու համար նպատակահարմար է կիրառել հետևյալ սկզբունքը: Որպես կանոն տնտեսական աճի տեմպի մեծացումն իրական է այն դեպքում, եթե հարկերի դրույքաչափերն էապես մեծ են, քան տվյալ երկրին մեկ շնչին ընկնող եկամտի ցուցանիշով համապատասխանող այլ երկրներում, հատկապես նույն տարածաշրջանում կամ միևնույն ինտեգրացիոն միավորումում:

Այդ պարագայում հարկերի նվազեցումը նպատակահարմար է, իսկ եթե հարկերի դրույքաչափերը տվյալ երկրում արդեն համեմատաբար ցածր են, ապա այդ դեպքում հարկերի նվազեցումն ավելի ցածր մակարդակի, քան հարևանների կամ նույն միության մեջ գտնվող երկրներում կարող է տնտեսական աճի վրա դրական էֆեկտ չունենալ, կրճատել պետական բյուջեի եկամուտները և հետագա աճին ուղղված հետագա ներդրումները:

Այսպիսով, Հայաստանում հարկերի օպտիմալ չափը գնահատելու համար անհրաժեշտ է գնահատել մեր երկրում հարկերի դրույքաչափերը այն երկրների դրույքաչափերի հետ, որոնք ունեն համեմատելի մեր երկրի հետ զարգացման մակարդակից, և որոնց հետ մեր առևտրաշրջանառությունը զգալի է:

Համեմատելով Հայաստանի և նշված սկզբունքներին համապատասխանող ԵԱՏՄ երկրների և Վրաստանի հարկերի դրույքաչափերը՝ կարելի է եզրակացնել, որ Հայաստանում հարկերի դրույքաչափերը բարձր են օպտիմալից, ինչը բացասաբար է անդրադառնում տնտեսության աճի վրա: Առավել ևս, որ հարկատեսակները տվյալ երկրներում առանձնապես չեն տարբերվում Հայաստանում կիրառվող հարկատեսակներից:

ԵԱՏՄ երկրների և Վրաստանի հարկերի դրույքաչափերը ներկայացված են աղյուսակում¹

Աղյուսակ 2. ԵԱՏՄ երկրների և Վրաստանի հարկային դրույքաչափերը:

	ԱԱՀ	Շահութահարկ	Եկամտահարկ
Հայաստան	20%	18%	22% ²
Ռուսաստան	20%	20%	13%
Բելառուս	20%	18%	13%
Ղազախստան	12%	20%	10% (ռեզիդենտների համար) 20% (ոչ ռեզիդենտների համար)
Ղրղըզստան	12%	10%	10%
Վրաստան	18%	15%	20%

¹ Նշում՝ Գծագրերը կազմված են հեղինակի կողմից ԵԱՏՄ երկրների և Վրաստանի հարկային օրենսդրության հիման վրա:

Հատկանշական է, որ հարկերի դրույքաչափերը Հայաստանում գերազանցում են ԵԱՏՄ երկրների և Վրաստանի դրույքաչափերը:

Պետք է նշել, որ հարկերի նվազեցման պայմաններում ծախսերի արդյունավետության գնահատումը խիստ նպատակահարմար է, և այդ կրճատումները չպետք է վերաբերեն պետության կողմից իրականացվող ներդրումներին, որոնց արդյունավետությունն ակնհայտ է, իսկ արդյունավետության գնահատականները՝ հստակ:

Ելնելով էմպիրիկ վերլուծությունից՝ կարելի է եզրակացնել, որ հարկերի դրույքաչափերը և հետևաբար ընդգծենք՝ մեր երկրի համար հարկային ծանրաբեռնվածությունն ավելի բարձր է, քան օպտիմալը, ինչը բացասաբար է անդրադառնում տնտեսական աճի վրա: Իհարկե, հարկային ծանրաբեռնվածության առումով Հայաստանի Հանրապետությունը կարող է զիջել ԵԱՏՄ գործընկերներին, ինչը կախված է հարկային վարչարարության հիմնախնդիրներից և որոշակի չափով կոռուպցիայի մակարդակից: Սակայն մեր դրույքաչափերն ավելի բարձր են, քան նրանցը: Տնտեսության զարգացման տեսանկյունից դրանք չի կարելի համարել օպտիմալ:

Անշուշտ, այլ գործոններ նույնպես ազդում են տնտեսության աճի վրա, մասնավորապես վարկային դրույքաչափերը, ազգային արժույթի

¹ <https://accounting.jara.ge/tax-systems-of-the-cis-countries-and-georgia/>

Налоговые системы стран СНГ и Грузии

² 2022 թվականին կազմելու է 21%, 2023 թվականին՝ 20%:

փոխարժեքը, պետական ծախսերի արդյունավետությունը, մեր տարածաշրջանի անկայուն իրավիճակը: Սակայն դա չի նվազեցնում հարկերի դրույքաչափերի գնահատման անհրաժեշտությունը ՀՆԱ-ի, նրա կառուցվածքի, արտահանման, զբաղվածության վրա:

Ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի հարկերի դրույքաչափերն էական ազդեցություն ունեն մակրոտնտեսական ցուցանիշների վրա: ԱԱՀ-ի նվազեցումը, որպես կանոն, դրական է անդրադառնում ՀՆԱ-ի վրա, իջեցնում է ճնշումը գների աճի տեսանկյունից, ինչպես նաև, դրանով իսկ մեծացնելով սպառման միտումը, իր հերթին մեծացնում է ներդրումները և զբաղվածության մակարդակը: Սակայն ֆիսկալ տեսանկյունից դա կարող է ունենալ բացասական ազդեցություն:

Փոքր տնտեսություն ունեցող երկրի համար առաջնահերթ դեր ունի արտահանման աճը, քանզի արտահանվող ապրանքի ԱԱՀ-ը վճարվում է ըստ սպառման տեղի, այդ իսկ պատճառով ԱԱՀ-ի դրույքը արտահանման տեսանկյունից էական ազդեցություն չունի: Այսպիսով, չնայած Վրաստանում ԱԱՀ-ը ավելի ցածր է՝ 18%, իսկ Հայաստանում՝ 20%, ԱԱՀ-ի նվազեցումը, բացասաբար անդրադառնալով տվյալ տարվա պետական բյուջեի եկամուտների ձևավորման վրա, որի զգալի մասն են կազմում այդ հարկի մուտքերը, արտահանման աճը մեծացնելու տեսանկյունից, խթանիչ գործառնության առումով, էական դեր չի ունենա: Քանզի արտահանումը ՀՆԱ-ի աճի համար փոքր տնտեսություն ունեցող երկրի համար վճարական գործոն է, ապա ԱԱՀ-ի նվազեցումը Հայաստանում գործառնությունների համակարգային վերլուծության տեսանկյունից նպատակահարմար չէ, որևէ զգալի ազդեցություն չունենալով արտահանման վրա՝ դա չի բերի ՀՆԱ-ի և զբաղվածության էական աճ: Հաշվի առնելով նաև, որ Հայաստանում գնաճը բավականին ցածր է, հիմնականում չի գերազանցում 5%-ը, ապա ԱԱՀ-ի նվազումն այս տեսանկյունից նույնպես նպատակահարմար չէ: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը Հայաստանում բավականին ցածր է, և այդ քայլը կարող է ուղղակի հակասել մեր կողմից ներկայացված բանաձևին:

Մի շարք տնտեսագետներ, մասնավորապես Էնգենը, Սկիները նշում են, որ հատկապես ուղղակի հարկերի՝ շահութահարկերի և եկամտահարկերի դրույքաչափերի փոփոխությունն ավելի ուժեղ ազդեցություն ունի ՀՆԱ-ի աճի տեմպի վրա, քան անուղղակի հարկերի փոփոխությունը: Փաստացի ուղղակի հարկերի խթանիչ գործառնություն ավելի ուժեղ է, քան անուղղակի հարկերի նույն գործառնությունը:

Եկամտահարկի մեծացումը որոշակի չափից հետո նվազեցնում է աշխատուժի նկատմամբ պահանջարկը, ինչը չափազանց կարևոր է այն երկրների համար, որոնք ունեն բարձր գործազրկություն, սակայն դրա մեծության գնահատականն ունի իր յուրահատկությունները՝ կախված տվյալ երկրի աշխատանքի արտադրողականությունից, աշխատավարձի չափից:

Հայաստանում եկամտահարկի դրույքաչափի կրճատումը դրական է գործազրկության նվազման տեսանկյունից: Այն առաջարկը, որ սոցիալական գործոնից ելնելով՝ կարելի է կիրառել եկամտահարկի դիֆերենցված սկզբունքը:

Ֆիսկալ գործառույթի տեսանկյունից կարող է զգալի ազդեցություն չունենալ, քանզի էապես մեծ եկամուտներ ունեցողների խավը Հայաստանում մեծ չէ: Դա նաև կարող է այս ոլորտում մեծացնել երկրի կոռուպցիոն մակարդակը՝ դրանով իսկ տվյալ քայլի սպասվող արդյունքն ավելի նվազեցնելով և՛ կարգավորիչ, և՛ խթանիչ գործառույթի տեսանկյունից:

Անհրաժեշտ է ընդգծել, որ հարկերի դրույքաչափերի համապատասխանեցումը նպատակահարմար է իրականացնել նաև ներդրումների ներգրավման առումով: Տվյալ պարագայում դա ուղղակի համապատասխանում է հարկերի խթանիչ գործառույթին:

Հարկերի դրույքաչափերի նվազեցումը, հատկապես ելնելով ԵԱՏՄ երկրների հարկերի դրույքաչափերից, որոնց ներդրումները մասնավորապես Ռուսաստանից ունեն բարձր հավանականություն, մասամբ կոմպենսացնում է ընդհանուր ներդրումային միջավայրի հիմնախընդիրները:

Տվյալ քայլը բավականին հաճախ է կիրառվում միջազգային պրակտիկայում, քանզի հարկային փոփոխությունն օրենսդիր մարմնում հնարավոր է արագ իրականացնել, օրինակ մի քանի քայլի միջոցով:

Մասնավորապես Իռլանդիայում էապես չնվազեցնելով հարկային բեռը, որն ի դեպ ամենացածրերից է Եվրոպայում (23%)³, ներդրումներ ներգրավելու համար ժամանակակից արդիական բնագավառներում, հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաներում, շահութահարկը այդ ոլորտում իջեցվեց 28%-ից մինչև 10% -ի⁴:

³ publicpolicy.ie/papers/the-irish-taxation-system-trends-over-time-and-international-comparisons/

⁴ <https://www.theguardian.com/world/2021/oct/23/will-irelands-corporation-tax-rise-see-tech-companies-leave-dublin>

3. Եզրակացություն

Հաշվի առնելով այն, որ հարկային ծանրաբեռնվածությունը Հայաստանում համեմատաբար ցածր է հարկային բարեփոխումների առաջին փուլում մինչև այդ ցուցանիշի որոշակի աճը, նպատակահարմար է կիրառել նաև հարկերի նվազման ընտրանքային սկզբունքը, հատկապես ուղղակի հարկերի մասով: Այս սկզբունքը կիրառելի է Հայաստանում, որի համար հստակ պետք է գնահատել այն ոլորտները, որոնք ապահովում են ՀՆԱ-ի, հատկապես ռազմաարդյունաբերական ոլորտի և պատրաստի արտադրանքի արտահանման էական աճը: Մեծացնելով նաև երկրի թվայնացման մակարդակը և անկանխիկ հաշվարկների տոկոսը, որը նպաստավոր է ամբողջ տնտեսությունում ստվերի նվազեցման տեսանկյունից: Պետք է նաև նշել, որ հատկապես այդ ոլորտների աճի տեմպի արագացումը ոչ միայն կոմպենսացնում է տվյալ ոլորտում դրույքաչափերի նվազեցումը, այլ նաև դրական է անդրադառնում հարկեր/ՀՆԱ հարաբերակցության վրա:

Ելնելով վերոհիշյալ սկզբունքից, շահութահարկի ընտրանքային ձևով բարեփոխումը, չհակասելով հարկերի ֆիսկալ գործառնություն նպաստավոր է հարկերի խթանիչ գործառնության առումով: Այդ մոտեցումը նպատակահարմար է կիրառել Հայաստանում, որտեղ հարկային ծանրաբեռնվածության մակարդակը ֆիսկալ գործառնության տեսանկյունից համեմատաբար ցածր է:

Գրականություն

1. Какулина М.О. Цепелев О.А. «Моделирование влияния налоговой нагрузки на экономический рост региона с учетом ресурсного потенциала», Владивосток 2014.
2. Solow R. M. A Contribution to the Theory of Economic Growth // The Quarterly Journal of Economics. — 1956. (vol. 70, № 1). — P. 65—94.
3. Mendoza E., G. Milesi-Feretti, P. Asea // On the Ineffectiveness of Tax Policy to Alter Long-Run Growth: Harberger's Superneutrality Conjecture. Federal Reserve Board of Governors, 1996.
4. Engen E., J. Skinner // Fiscal Policy and Economic Growth. NBER Working Paper 4223, 1992
5. McCallum, J., A. Blais // Government, Special Interest Groups, and Economic Growth. Public Choice, v. 54, 1, 1998.
6. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք:
7. Налоговый кодекс Российской Федерации (НК РФ)
8. Кодекс Республики Казахстан о налогах и других обязательных платежах в бюджет (Налоговый кодекс).
9. Налоговый кодекс Республики Беларусь.
10. Налоговый кодекс Кыргызской Республики.
11. Налоговый кодекс Грузии.
12. <https://www.theguardian.com/world/2021/oct/23/will-irelands-corporation-tax-rise-see-tech-companies-leave-dublin>

Ընդունված է 28.10.2021

Գրախոսված է 25.11.2021

ВЗАИМОСВЯЗЬ НАЛОГОВОЙ СИСТЕМЫ И МАКРОЭКОНОМИЧЕСКИХ ПОКАЗАТЕЛЕЙ

Тавадян Э.А.

Аннотация. Экономический рост за счет снижения налогов реалистичен, если налоговые ставки значительно выше, чем в других странах с сопоставимым доходом на душу населения, торговый оборот с которыми значителен. Если налоговые ставки в данной стране уже относительно низки, то снижение налогов на более низкий уровень, чем в соседних странах или странах одного и того же союза, не окажет положительного влияния на экономический рост. В контексте снижения налогов оценка эффективности затрат весьма целесообразна. Сокращения затрат не должны относиться к государственным инвестициям, эффективность которых очевидна. Исходя из эмпирического анализа, для Армении налоговые ставки выше оптимальных, что отрицательно сказывается на экономическом росте. Учитывая, что налоговая нагрузка в Армении на данном этапе налоговых реформ относительно низкая, до определенного увеличения этого показателя целесообразно применять выборочный принцип снижения налогов, особенно прямых налогов.

Ключевые слова: налоговая система, макроэкономические показатели, налоговые ставки, оптимальная ставка, экономический рост.

THE RELATIONSHIP BETWEEN THE TAX SYSTEM AND MACROECONOMIC INDICATORS

Tavadyan E.A.

Annotation. Economic growth through tax cuts is realistic if tax rates are significantly higher than in other countries with comparable per capita income, with which trade is significant. If tax rates in a given country are already relatively low, then lowering taxes to a lower level than in neighboring countries or countries of the same union will not have a positive effect on economic growth. In the context of tax cuts, a cost benefit assessment is highly appropriate. Cost reductions should not be attributed to public investments, which are clearly effective. Based on empirical analysis, tax rates for Armenia are higher than optimal, which negatively affects economic growth. Taking into account that the tax burden in Armenia at this stage of tax reforms is relatively low, until a certain increase in this indicator it is advisable to apply the selective principle of tax cuts, especially direct taxes.

Key words: tax system, macroeconomic indicators, tax rates, optimal rate, economic growth.